

## ՆԵՐԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կովկասցիների հանրագրերը:—Տերթիսունալ եւ կրօնական անջրպետներ:—Բարձր, Ուկազ կրօն, համբեռողութեան մասին:—Ազգայնական եւ կրօնական շաղկապ, —նոր ազգութիւնների կազմակերպում, —Հայկական հանրագիր:—Կովկասի փոխարքոյի մուտքը Թիմիս:—Հայ, լուս, նոր, վարչական կարգով պատիժների վերացում: —Թիւրքիայից եալիսկապուտնարու համար էջսիածին եկող վարդապետների հարցը:—Արեւմետան 9 նահանգների մասին Բարձր ուկազ:

Մեր երկրի երեք ստուարաթիւ ազգութիւնները, հայ, վը-  
րացի և թուրք, արտայայտեցին իրանց բաղանքները և հա-  
մարակական-քաղաքական ծրագրները: Այդ ծրագրների մէջ  
շատ ընդհանուր կէտեր կան և պէտք է խոստովանել որ հա-  
մակովկասեան պահանջները աւելի լուրջ են մշակուած հայկա-  
կան հանրազրում, որ, եթէ ուզենալու լինենք ընորոշել որոշ  
քաղաքական տերմինով, չենք կարող նացիօնալ-դեմոկրատիա-  
կան չանուանել: Այլ գոյն են ստանում վրացական ծրագրները  
իրանց տերըիտորեալ պահանջներով և թուրքականը՝ իր կրօ-  
նական շաղախով:

Պարզենք մեր ասածը:

Հարաւային Կովկասում ամենահին բնիկներն են, բացի  
լեռնական ցեղերից, հայերն և վրացիները, որոնք այժմ էլ  
ըսնում են իրանց հին ծննդավայրերը: Թէև վրացիները սիրում  
են հայերին համեմատել հայրենազուրկ հրէաների հետ, սա-  
կայն բաւական է որ նրանք մի քիչ ծանօթ լինէին Փակտերին  
որպէս զի դադարէին այդ ուղղութիւնամք ենթադրութիւններ անե-  
լուց: Թող ընթերցողը ուշադրութեամբ ըննի այս համարի 113  
էջում բերած թուերը և, հաւատացած ենք, որ նա մեզ հետ կը հա-  
մոզուի թէ հայ տարրը այժմ էլ, չնայած դարերի ընթացքում  
տեղի ունեցած մասսային կոտորածներին, գերի տարուելուն և  
գաղթերին, նշանաւոր թիւ է կազմում հին հայկական Այրա-  
րատի, Արցախի և Սիւնիքի գաւառներում:

Համեմատաբար նորեկ է թուրք-թաթարական տարրը,  
որ 700 տարի առաջ հրով և սրով հաստատեց իր ընակութիւ-

նը մեր երկրում: Թուրք-թաթարական ցեղը այժմ էլ աւելի ստուար է իր հին ծննդավայրին մօտ նահանգներում, այսինքն թուրք-թաթարական տարրը գերիշխում է Հարաւալին Կովկասի արևելեան մասում, որ բաժանուած է Միջին Ասիայից, Կասպից ծովով:

Իրանց հին ծննդավայրերում են ապրում և Կովկասեան լեռնականները, արխազները, չերքէզները և լեզգիները, որոնք բաժան-բաժան են եղած բազմաթիւ ցեղերի և բարբառների:

Այդպիսով տերրիտորեալ որոշ տարածում ունի իւրաքանչիւր ազգութիւն, սակայն գրանից դեռ չէ հետեւում որ ներկայ սոցիալ-տնտեսական պայմաններում կարելի է վերացական հիմունքներով սահմանագծեր, անջրպետներ դնել ազգաբնակութեան զանազան ցեղերի մէջ: Երկրի ընդհանուր, հաւասար, ազատ օրինակարգը չի խանդարիլ որ իւրաքանչիւր ցեղ անարգել զարգացնի իր ազգային-կուլտուրական առանձնայատկութիւնները, շարունակի ապրել իր ծննդավայրում, պահպանելով համերաշխութիւն հնադարեան հարևանների հետ. սակայն անհատների տեղափոխութիւնը, զբաղմունք գտնելը չի կարելի սահմանափակել ինչ-որ կասկածելի հին դոկումենտներով... Մենք գիտենք որ հողի սակաւութեան հարց են յարուցանում վրացի ինտելիգենցիները, երբ խօսք է լինում Թիւրքիայից զաղթածների անորմալ զրութիւնը կանոնաւորելու փորձի մասին՝ Աև ծովի այն ափերում, որ պատմականօրէն Աբխազիա է կոչւում... Այդ ուղղութեամբ մտածելով շատ հեռուները կը գնան մեր զարեւոր բարեկամները: Հողը պէտք է պատկանի նրան մշակողին, և գիւղացիական հողատիրութեան մասին երեք ազգութիւնների կողմից ևս ընդունուած կէտերը մի կողմից կը վերացընեն լատիֆունդիաները, միւս կողմից վերջ կը դնեն հողի սակաւութեան: Զալէտք է մոռանալ որ մեր երկիրը իր տարածութեամբ համարեա ծավոնիայի չափ է, և, ուրեմն, կարող է ունենալ ոչ թէ 6 միլիոն ազգաբնակութիւն, այլ տասն անգամ աւելի. վրա համար տերրիտորեալ հարցեր չպէտք է յարուցանել, այլ սոցիալ-տնտեսական բնֆորմների վրայ ջանք գործ դնել...

Դանք թուրքերի ծրագրի առանձնայատկութեան:

Եթէ ուշագրութիւն դարձնէք թուրք ծրագրի հոգու վրայ, դուք, կարծում եմ, կը համոզուէք որ մեր այդ հարևանները դեռ ևս դուրս չեն եկել զարգացման այն աստիճանից, որի վրայ կանգնածների համար կրօնը և ազգութիւնը հոմանիշ են: Աւելի ևս զարմանալի է այն՝ որ նաև ոչ-մուսուլմանները՝ մա-

մուլի մէջ, վրացուն ու հային հակաղըռում են մահմեղականը, կարծես լոելեայն ընդունելով՝ թէ մահմեղականութիւնը և ազգութիւնը նոյն է... Եւ այդ սխալ հասկացողութիւններից օգտըռում է աւելի ստուար, թուրք-թաթարական տարրը և «համիսլամական» ու «թուրք-թաթարական» պահանջները նոյնանիշ յայտարարում: Ոչ մի տեղ նրանք չեն յիշում որ «մայրենի լեզու» ունին և ոչ թուրք մահմեղականները. իրանց հանրագրի մէջ, ընդհանուր մահմեղականութեան բաղամաքների մասին խօսելով, նրանք ընդգծում են միայն թուրք լեզուի արտօնութիւնները: Մուսաստանի 14 միլիոն մահմեղականների մէջ թուրք-թաթարները կազմում մօտ 3,800 հազար: Թողննենք ամբողջ Մուսաստանը և վերցնենք Հարաւային Կովկասը. այլուել ևս, թուրք-թաթարական տարրից բացի, մահմեղական են. լեզգիները, արիազների մի մասը, չէրքէզները, թաթերը, թալիշները, պարսիկները, քրդերը, լազիրը, էլ չենք ասում մահմեղականացած այլ վրացիների և հայերի մասին, որոնք, կորցնելով լեզուն, ձուլուել են բռնութեամբ իրանց կրօնափոխ արած տարրի հետ... Արդ, այդ բոլոր մահմեղական ցեղերը չեն որ ըստ ազգութեան ոչինչ կապ չունին թուրք-թաթարական ցեղի հետ և նրա հետ շաղկապուած են լոկ կրօնական շաղախով: Մենք ընդունում ենք որ այդ ազգերի ներկայ կուլտուրական ստոր վիճակի մէջ իսլամը կատարում է այն արուեստական ցեմենտի դերը, որ միացնում է լեզգուն, չերքէզին, լազին, քրդին, պարսիկին՝ թուրքի հետ և մի խայտարդէտ կոնդլոմերատ կազմում: Ընդունում ենք որ հին բեժիմի կրօնական սահմանափակումները աւելի սերտ են դարձրել մահմեղականների ընդհանուր շահերը, սակայն նոյն այդ ստորանափակումների մասին հարց յարուցանել և միայն «մայրենի թուրք լեզուի» ազատ զարգացման մասին յիշառակել—նշանակում է դիտմամբ շփոթել կրօնի և ազգութեան հարցը...

Ապրիլի 17-ին կառ. Մենատին Բարձրագոյն տուած ու կազով նշանաւոր քայլ է արուած դէպի խոճի ազատութեան մեծ բեֆորմը: Եւ բոլորս ցանկանում ենք որ մահմեղականները, ինչպէս և հրէաները, բաղաքական, բաղաքացիական և կրօնական իրաւունքների մէջ հաւասարուեն միւս բաղաքացիների հետ և առհասարակ մեր կեանքում կրօնը դառնայ անհատի մասնաւոր գործ, պետական տեսակէտից չէզոք մի հասկացողութիւն: Խղճի կատարեալ ազատութիւնը և եկեղեցու անջատումը պետութիւնից կը վերացնի այն ներհակութիւնը որ նկատում է նոյն ազգի տարրեր դաւանանքի պատկանող մասերի մէջ, և ազգային զաղափարը աւելի ևս զտուած կը սկսի զարգանալ

համամարդկային-կուլտուրական ուղղութեամբ։ Կրօնը որոշ քաղաքական գործօնի գեր է ստանում միմիայն երբ նաև լածուած է, և կորցնում է իր նշանակութիւնը, երբ աղջային-կուլտուրական ազատ զարգացումը հաստատ հող է գտնում իր ոտի տակ։ Այդ տեսակէտից թէ ընդհանուր պետական և թէ համամարդկային առաջադիմութեամ շահերը պահանջում են կրօնական առանձնաշնորհումների կատարեալ չէզոքացում։ Դաւանանքը՝ իրեր գրսից ներմուծուած, տուովի երեսյթ՝ կարող է փոփոխուել վերանալ նոյն ազգի մէջ, մինչդեռ լեզուն՝ իրեր բնական, օրգանական մի երևոյթ՝ ունի շատ խոր պատմական արժանահեր ազգի անցեալի մէջ և իրեր այդպիսին՝ ցեղական է և մշտափթիթ ու կենսունակ։ Ուստի կրօնական ու աղջային գաղափարների տարբերութիւնը պէտք է անուես չանեն և մեր մահեղականները եթէ նրանք ուղում են քայլել առաջադիմութեան շաւղով։ Տարաբաղդաբար այդ չի նկատում մեր մահեղական ինտելիգենցիայի մէջ, որ գեռ ևս երազում է ինչ որ համիուամական ցնորդների մասին, խիելով իր աչքերը արաբական շարժման ազգայնականութեան առաջ...

Ինչպէս որ իրար կարող են հասկանալ և յարգել միմիայն հաւասարապէս ազատ և ինքնազիտակցութիւն ունեցող անհատները, այնպէս և իրար հետ կարող են համերաշխ լինել հաւասարաիրաւունք և զարգանալու ազատութիւն ունեցող հաւաքական անհատականութիւնները կամ ազգութիւնները։ Ղեկավարուելով այդ սկզբունքով, մենք կը ցանկայինք որ խախտուէր կրօնական շաղկապը մահեղական ազգութիւնների մէջ ևս, և չերքէզը, արխազը, լեզգին, քուրդը և այլն, և այն զարգացնէին իրանց մէջ ազգայնական ձգտումը։ Համարեա մեր աչքի առջև կատարուեց վրացական տարբեր ցեղերի միացումը մի բարբառի գրական ազգեցութեան շնորհիւ. այսօր իմերելը, մինզընը, գուրիացին, փշաւը, բարթուել ցեղի հետ միասին մի ազգ են կազմում։ Ինչու նոյն ճանապարհով չի կարող արխազ-շերքէզեան ցեղերի մի ազգութիւն առաջանալ և լեզգիական ցեղերը չեն կարող նոյն կերպ միանալ։ Բաւական է դրա համար որ այդ ցեղերի մէջ ինտելիգենտ ոյժերի մի կորիկ կազմակերպուի, սկսուի հրատարակուել թերթ, հիմնուեն զպրոցներ, ուր մայրենի լեզուի գերը կատարի ամենատարածուած բարբառը... Ահա ստեղծագործական մի հրաշալի աւապարէզ, որի վրայ պէտք է ուշ դարձնէին մեր լեռնականները։ Նոյն ուղղութեամբ կարող են գործել օս, քիւրդ, պարսիկ տարբերը։ Այն ժամանակ թուրք-թաթարական տարրը կը սովորէր տարբերել ազգային և կրօնական տեսակէտները...

Չպէտք է վախենալ կեանքի բաղմազանութիւնից: Երբ վերանան կեանքի ազատ զարդացման արգելք եղող հնացած են երն ու հասկացողութիւնները—շատ մեռելներ յարութիւն ունեն, շատ համրներ կը սկսեն խօսել: Եւ մըթէ անապատը լաւ է բուրաստանից, գերեզմանային լոռութիւնը կեանքի ժխորից... Տգիտութեան և ֆանատիզմի շերտերի տակ մեր ասպետ լեռնական հայրենակիցները ունին թագցրած, նիրհնդ, սաղմային դրութեան մէջ հոգու և մտքի սքանչելի յատկութիւններ, որոնց երեան հանելլ և զարգացումը առանձին փայլ կը տայ ոչ միայն պետութեան, այլ և համայն մարդկութեան: Միայն պէտք է փշը գարերի ընթացքում դրանց հասկացողութիւնների վրայ նստած կեղեւ, տարրալուծել այն կրօնական շաղախը, որ կպցը է նրանց թուրք-թաթարական տարրի հետ և անշարժութեան մատնել այլ ծագում ունեցող այդ ցեղերը: Միայն պէտք է վերացնել այն կարգերը, որոնք անարդար լինելով ատելութիւն և վրիժառութիւն են ոնուց անում լեռների այդ խրոխտ զաւակների մէջ և մեկուսացնում, կղղիացնում նրանց՝ մեր կուլտուրական կեանքից:

Եւ այն նոր կեանքը, որ յայտարարում է ազատ զարդացման երաշխաւորութիւն բոլորի համար, առանց կրօնի, ազգի և սեռի խտրութեան, վերածնութեան սկիզբ կը դնի մեր բաղմատանջ երկրի համար: Ուրեմն, մի կողմ թողնենք տեղրիտորեալ և կրօնական անջրապետները, որոնք արուեստական խոչընդուներ են դնում օրէցօր բարդուղ կեանքում և իրանց մէջ պարունակում են կադ ու կոռի սերմեր ապագայում...

L. U.

Մայիսի 1-ին.

### Հայկական հանրագիրը

1) Հրաւերել համառուսական ներկայացուցչական ժողովը ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատւութեան սկզբունքներով, տալով հայ ժողովրդին իրաւոնք մասնակցելու այդ ժողովին Ռուսաստանի ներքին նահանգների հետ համահաւասար հիմունքներով:

2) Մտցնել Անդրկովկասում տեղական անդասակարգ ինք-չափարութիւն լայն հիմունքներով, հիմնելով ա.) ինքնավարմանը զեմստվային միութիւն, բ.) դաւառական (առանց նահանգականի) գեմստվո, առանձնացնելով քաղաքային ինքնավարութիւնը իրրև առանձին միութիւններ և գ.) մէկ Համա-